# ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

## ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ասպվածաբան, փիլիսոփա, հոգևոր կրթական գործիչ Գևորգ Չորեքչյանը (1868-1954 թթ.), 1945-1954 թթ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, գիտական, մանկավարժական և գործնական հարցերով նամակագրական կապ է ունեցել այն ժամանակ թիֆլիսաբնակ (1925-1936 թթ.) բանասեր, հայագետ, լեզվաբան, Էջմիածնի միաբանության պատգամավոր, ատենապետ Ստ. Մալխասյանի հետ:

Նամակները, որ ներկայացնում ենք, պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվի Ստ. Մալխասյանի ֆոնդում (թղթ. 4, վավ. 143-148) և չեն ընդգրկվել Ս. Բեհբուդյանի կազմած ժողովածուում:

*ՋՈՒԼԻԵՏՏԱ ՍԱՀԱԿՅԱՆ*

*Վավերաթուղթ № 143*

### ՊԱՏՈՒԱՐԺԱՆ Պ. Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆ

Ի դիմաց նախագահութեան յայտնում եմ, որ Ձեր իսպառ հրաժարուելը ցանկալի չէ ինքնին, այլ եւ ուրիշ ոչ ցանկալի նկատառումներով: Մեր խնդիրը կը լինի Ձեզ՝

մնալ ե՛ւ պատգամաւոր, ե՛ւ ատենապետ ժողովի ու գալ մասնակցել, երբ հնարաւորութիւն ունենաք: Կը ստորագրէք նախկին արձանագրութիւնների տակ, իսկ Ձեր բացակայութեամբ գումարուած ժողովներից միայն նոցա տակ, որ կը կարդաք եւ հաւան կը լինէք: -Ի դէպ, տեղեկագիրն ուղարկել էիք, բայց Ձեր տպաւորութեան մասին չէիք գրել:

Խորին յարգանքով՝

*ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ*

9/10-1925
Թիֆլիզ

*Վավերաթուղթ № 145*

*11/ 3-1934*
*Ս. Էջմիածին*

## ՄԵԾԱՐԳՈՅ ԲԱՐԵԿԱՄ ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Յաջողութեամբ տեղ հասայ եւ գտայ Վեհափառ Հայրապետին ու բոլոր միաբաններին ողջ, բայց ոչ առողջ: Վեհափառ Հայրապետը վեց օր անկողնումն է եղել, բայց այժմ կատարելապէս առողջ է. ինձ թւում է, թէ երկու ծանր հիւանդութիւնից յետոյ, այն է՝ թոքերի բորբոքումից եւ տիֆից յետոյ՝ պէտք է որ նա ամարանոց գնար հանգստանալու եւ կազդուրուելու: Տեսնենք այս ամառ կ'երթա՞յ, կը կարողանա՞նք համոզել, որ երթայ: Երկրորդ լուրջ հիւանդը Մեսրոպ եպիսկոպոսն է եղել, որ այժմ լաւ է. ուղեղի կաթուածից հազիւ ազատուել է. Թիֆլիսից եղբայրն էլ եկած է եղել:

Ձեզ հետաքրքրող առաջին հարցի նկատմամբ կ'ասեմ, որ փոքր ինչ ուշ է գրուած եղել, ուստի եւ ո՛չ դրամն է ստացել, եւ ո՛չ պատասխան իր հեռագրին: Այժմ երկրորդուեցաւ, անպայման կստանայ: Երկրորդ հարցի պատասխանը մօտ օրերս կ'ուղարկեմ. տրամադրութիւն կայ ապրիլի մէջ գումարելու. այս օրերս այդ առթիւ ժողով կ'ունենանք եւ որոշում կ'անենք ու պատրաստութեան մասին կը խորհինք:

Ամերիկայի Առաջնորդ Տ. Ղեւոնդ արքեպիսկոպոսի սպանման եւ թաղման մանրամասնութիւններն են ստացուել: Դէպքը տեղի է ունեցել Նիւ-Եորքի Ս. Խաչ

եկեղեցում, ուր հրաւիրուած է եղել պատարագելու եւ քարոզելու: Խորանից ելնելիս վեց հոգի երկու կողմից յարձակւում են եւ կողերից հարուածում դանակներով, որի հետեւանքով շատ շուտով մահանում է: Սպանողները տաճարում եղող մոտ 300 հոգուն սպառնալիքով անարգել են եւ փախել: Ներկայ եղողները ապշել են, մոլորուել եւ ահաբեկման ներքոյ անկարող են եղել բռնել տեղն ու տեղը: Դպիրներն ու քշոցակիրներն էլ են նոյն վիճակին մատնուել: Այժմ բռնուած են եօթը հոգի, որոնք խոստովանուել են, որ դաշնակցականներ են իրենք, թէեւ հրաժարուել են սպանութիւնից. բռնուած է նաեւ դանակավաճառը, որ միայն մէկին է ցոյց տուել դանակ գնողներից:

Ամբողջ գաղութահայութիւնը, որոնց թւում ամերիկահայութիւնը, ոտքի է ելել, բողոքի ցոյցեր է կազմակերպել, դաշնակցութեան բոյկոթի ենթարկելու լօզունգներ հանել եւն եւն: Դաշնակցութեան դէմ ընդհանուր զայրոյթ եւ ատելութիւն կայ, որ տեղին է: Մեծ շուքով թաղման կարգն է կատարուել. ներկայ են եղել բողոքական, կաթոլիկ, յոյն, անկլիքան եւ ասորի Եկեղեցիների եպիսկոպոսներ ու բրիտանական հիւպատոսը: Օծումը կատարուել է Նիւ-Եօրքի ամերիկյան Մայր եկեղեցում եւ ապա տեղափոխուել Հայոց Մայր եկեղեցին: Որոշում ունին մարմինը Ս. Էջմիածին եւ եթէ այդ հնարաւոր չլինի՝ Երուսաղէմ փոխադրել:

Ցարգանքով եւ ողջունիւ Ձերոնց՝

Մնամ սիրով եւ բարեացակամութեամբ՝

*ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ*

Յ. Գ. - Լենինական երթալու պատրաստութեան մէջ եմ:

Նոյն

*Վաւերաթուղթ №144*
*29/ 3-34 թ.*

## ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Ստացել եմ Ձեր մարտ 21 թուակիր նամակը: Զատկին գալս չի յաջողուի, քանի որ մերոնք համարեա բոլորը դէս ու դէն են գնացել տօների առթիւ: Վեհափառը Զատկին Պատարագ պիտի մատուցանէ, եւ ես՝ իբրեւ լուսարարապետ, պիտի ներկայ լինեմ, որ շուքն ու կարգը տեղը լինի. այս է կարգը: Տեսնուեցայ Լ-ի հետ

ինչպէս խոստացել էի. կրկին հաստատապէս վստահեցրեց, որ խոստումները կը կատարուեն. եւ ես միամիտ եմ. այսու հանդերձ Վեհի ցանկութիւնն է, որ ես Մայիսի գլխով գամ եւ ամէն ինչ վերջացնեմ:

Խորհրդակցութիւն ունեցանք եւ որոշեցինք Ձեզ հրաւիրել Ապրիլի մէջ. ճիշդ ժամանակը դեռ չենք որոշել, հաւանօրէն 20-ներին կը լինի. կը հեռագրենք:

Ընտրութիւնները կատարուեցան Վեհի կողմից, փոքրիկ փոփոխութեամբ. վերստուգչի մի անդամը գալիս է խորհրդի անդամ: Ծուտով Դուք եւս Հայրապետական յատուկ կոնդակ կը ստանաք, որին արժանի էիք, որ ի սրտէ շնորհաւորում եմ:

Շնորհաւորում եմ նաեւ առաջիկայ Զատկի տօնը լաւագոյն ցանկութիւններով:

Ցարգանաց ողջոյնս յղելով Տիկնոջդ ու դուստրերդ՝ մնամ միշտ սիրով եւ բարեացակամութեամբ՝

*ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*

*Վաղերաթուղթ № 146*

## ՄԵԾԱՐԳՈՅ Պ. ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄ

Միխայլովը այսօր էլ գնացքով Բագու էր գնացել, ուր կը մնայ մինչեւ 22-23-ը: Կը խնդրէի, որ տելեֆոնով խօսէիք Նառեանի հետ եւ իմ անունից յայտնէիք, թէ մի կարեւոր խնդիր լուսաբանելու համար կը կամենայի իրեն հետ տեսակցել եւ իմանայիք, թէ ե՞րբ կը կարողանայ շնորհ բերել ինձ մօտ:

Նառեանի տելեֆոնի №-ը յայտնի է Ձեզ: Գիտեմ, որ երեկոյանները ժամը 8-ից լինում է իր գրասենեակում: Հետեւանքների մասին կը խնդրեմ տեղեկացնել:

Ցարգանքով՝

*ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*

15/6-1935 թ.
Թիֆլիս

*Վավերաթուղթ № 147*

## ՄԵԾԱՐԳՈՅ Պ. ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ ԵՒ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Ձեր նամակը ստացել է Վեհափառ Հայրապետը եւ իրազէկ է Բաթումի անցուդարձին: Ամսիս 25-ին Վեհի կողմից յանձնարարուեցաւ ինձ տեսակցութիւն ունենալ Ներքգործժողկոմատի համապատասխան պաշտօնեայի հետ նախ՝ լուսաբանելու անցուդարձը եւ աջակցութիւն խնդրելու, որ Բաթում գործուղուած քահանան անվտանգ մնա իր նոր տեղում ցնոր կարգադրութիւն: Երկրոդ՝ որ թոյլատրուի մէկին Թիֆլիզ եւ Բաթում երթալու՝ կառավարութեան հետ բանակցելու համար տեղի ունեցած դէպքերի մասին եւ ժողովրդեան հանգստացնելու: Առաջին հարցի նկատմամբ չհաւատաց, որ գործուղուած քահանան Կեդրոնի իշխանութեան համաձայնութեամբ է գնացել. նրա այս ենթադրութեան հիմքն այն էր, թէ Կեդրոնի իշխանութեան համաձայնութեան դէպքում անկարելի է, որ տեղական իշխանութիւնը 24 ժամուայ ընթացքում հեռանալու ուլտիմատում դնէր: Երկրորդ խնդիրը բացարձակապէս մերժեց, իսկ Բաթումի եկեղեցեան ազատականներին յանձնելու ժողովրդի կասկածը համարեց պրովոկացիա:

Վերոյիշեալից յետեւում է, որ Թեմական Հոգ. Խորհրդիս է մնում բանակցութեան միջոցով հնարաւորն անել եւ Բաթումի եկեղեցին առանց քահանայի չթողնել եւ նախկին քահանայի դատի պաշտպանութիւնը յանձնարարել Բաթումի եկեղեցական խորհրդին, եթէ յիրաւի քահանան անպարտ է, եւ եկեղեցու փակման ժամանակ փոխանցման վտանգից զերծ պահել:

Էջմիածինը հոգով կը կամենար եւ պատրաստ էր անմիջապէս միջամտել գործին եւ ղեկավարութիւնն իր վերայ առնել, սակայն իրենից անկախ պատճառներով հնարաւորութիւն չունի: Մեզ կարեւոր է ունենալ Բաթում գործուղուած քահանային տրուած պաշտօնական գրաւոր յանձնարարականի վաւերական պատճէնը եւ գրութեան հիմք ծառայող կառավարութեան պաշտօնեայի բանաւոր յայտարարութիւնը կամ, եթէ կայ՝ գրաւորը եւ յայտարարող պաշտօնեայի անունը:

Սոյն գրութիւնը մասնաւոր բնոյթ ունի, բայց գրում եմ Վեհի ցանկութեամբ եւ գիտութեամբ. գրութեանս եւս իրազէկ է:

Ցարգանքով եւ բարեացակամութեամբ՝

*ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*

29/3-1936 թ.

Ս. Էջիմածին

Ց. Գ. - Ցամենայն դէպս Էջմիածինը ձեռնթափ չէ, այլ հետամուտ է հնարաւորն անելու, որ Մեր իշխանութիւնն էլ գործի արդար մասին իր աջակցութիւնն բերէ: Այլ եւ խնդրում է, գործի յետագայ ընթացքին իրազէկ պահել մեզ:

Նոյն

*Վավերաթուղթ № 148*

## ՄԵԾԱՐԳՈՅ Պ. ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ ԵՒ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Ցայտնի է Ձեզ, որ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը՝ Մկրտիչ քահանայ Յովհաննիսեանի կարգալուծման հարցը առժամապէս յետաձգել էր եւ մտադիր էր քահանայագործութեան դադարեցմամբ գոհանալ: Սակայն չկամենալով վշտացնել Թեմ. Խ(որհրդ)ի անդամներին ներկայ ծանր պաշտօնավարութեան շրջանում, այլ եւ նկատի առնելով Ձեր երկիցս յարուցած յատուկ միջնորդութիւնը՝ կարգազուրկ յայտարարեց նաեւ նրան ի թիւս միւս երկուսի:

Յիշատակուած կարգազուրկ Մկրտիչ ք. Յովհաննիսեանը տարուոյս Յունուարի 1-ին Մայր Տաճարում հրապարակաւ գրաւոր մեղայական ներկայացրեց Ազգիս Վեհափառ Հայրապետին շատ սրտառուչ եւ յուզիչ խօսքերով, որոնք՝ անկեղծ սրտից բղխած՝ զղջացող հոգու արտայայտութիւններ էին, որպիսի ոգով գրուած էր նաեւ գրաւոր մեղայականը, բայց անպատասխան վերադարձաւ:

Գեր. Հոգ. Խ(որհուրդ)ը՝ նկատի առնելով նորա՝ անցեալում ցուցադրած հաւատարմութիւնը հանդէպ Հայ Եկեղեցու եւ մաքառումը «ազատականների» դէմ, սոյնպէս նաեւ նորա՝ ներկայ անկեղծ զղջումը՝ կը կամենար ներել նրան, սակայն առանց վիշտ պատճառելու Վրաստանի ներկայ Թեմ. Խ(որհրդ)ի անդամներին, որի հաւատարիմ եւ նուիրեալ գործունէութիւնը թանգ է գնահատում Խ(որհուրդ)ս: Վերոյիշեալը նկատի առնելով՝ մասնաւոր եղանակով յանձնարարուած է ինձ այս բոլորը հաղորդել Ձեզ, որպէս զի Դուք Թեմ. Խ(որհրդ)ին տրամադրէք միջնորդել Վեհի առաջ ներման արժանացնել յիշեալ քահանային՝ բաւ համարելով նորա կրած հոգեկան տանջալից ապրումները: Կարեւոր կը լինի նաեւ կարգազուրկ քահանայի դիմումը Թեմ. Խ(որհրդ)ին: Ըստ մեզ այս կը լինի յարուցուած խնդրի լաւագոյն լուծումը:

Նամակով դիմել էիք ինձ եւ հաղորդելով Ախալցխայի Տօնապետեան եւ Ազնաւուրեան քահանաների իշխանասիրական վէճը, որ տարածուել էր նաեւ ծխականների մէջ՝ նոր միջոց առաջարկել խնդրի լուծման համար: Այս մասին զեկուցի Վեհափառ Հայրապետին, սակայն նա առաջարկուած եղանակը նպատակայարմար չգտաւ:

Երկու նուագ շատ սիրալիր տեսակցութիւն ունեցանք տրամվայում եւ փողոցում պրոֆ. Մանուկ Աբեղեանի հետ. ի միջի այլոց խօսք եղաւ նաեւ Ձեր բառարանի ուղղագրութեան մասին. իմ մեղադրանքի հանդէպ յայտարարեց, որ ինքը կողմնակից է եղել հին ուղղագրութեամբ տպագրելու տեսակետին եւ այս իմաստով էլ խօսել է պատահած դէպքում, ինչպէս նաեւ պատրաստ է այդպէս էլ խօսել պետական բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչների հետ անխտիր, եթէ նոցա կողմից առաջարկ լինի իրեն: Շատ ուրախացայ եւ հաղորդեցի իրեն, որ կը յայտնեմ այս մասին Ձեզ: Ժողովի չգալու հանգամանքը բացատրեց նա ոչ խուսափելու պատրուակով, այլ իր ընդհանուր սովորութեամբ՝ այդպիսի ժողովներին չմասնակցելու որոշման հետեւանքով:

Վեհն առողջ է եւ ողջունում է Ձեզ՝ ընտանեօք հանդերձ: Այլ նորութիւններ չունեմ: Ողջոյնս Ձերոնց տալով՝ մնամ յարգանօք՝

*ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*